

# Արտադրողների խմբեր, Քայլ առ քայլ՝ լավագույն փորձի կանոնագիրք

## Ներածություն.

Սույն հրապարակման նպատակն է նախագծի մասնակիցներին և պոտենցիալ շահառուներին ներկայացնել արտադրողների խմբերի ստեղծման մեխանիզմները:

Հրապարակումն ունի ուսուցողական բնույթ և կազմվել է «Արտադրողների խմբերը և արդյունավետ գյուղատնտեսական խորհրդատվությունը որպես Շիրակի մարզի զարգացման հնարավորություն» նախագծի էության բացահայտման նպատակով:

Նախաձեռնությունն իրականացվել է 2013 թվականին Վելիկոպոլսկայի վոևոդության Մարշալային կառավարման մարմնի կողմից Պոզնանում տեղակայված գյուղատնտեսական խորհրդատվական կենտրոնի համագործակցությամբ, Լեհաստանի Հանրապետության արտաքին գործերի նախարարության հատկացրած միջոցների հաշվին «Զարգացման Լեհական օգնություն 2013» մրցույթի շրջանակներում:

Սույն հրապարակման մեջ հավաքագրված նյութն իրենից ներկայացնում է այն պրակտիկ տեղեկատվության համակարգումն ու լրացումը, որը տրամադրվել է նախագծի մասնակիցներին, ովքեր գտնվել են Վելիկոպոլսկայի վոևոդության տարածքում երկշաբաթյա վերապատրաստման շրջանակներում /2013թ. սեպտեմբերի 9-25-ը/:

Հրապարակումը ներկայացնում է բացառապես հեղինակի կարծիքը և կարող է չհամկնել Լեհաստանի Հանրապետության արտաքին գործերի նախարարության պաշտոնական դիրքորոշման հետ:

## Արտադրողների խումբ-Քայլ 1

### Ինչո՞ւ արժի ստեղծել արտադրողների խումբ.

Գյուղատնտեսական մթերքներ արտադրողների հիմնական առաջադրանքն է արտադրել այնքան քանակի սննդամթերք, որը կբավարարի եվրոպական համայնքի պահանջումները:

Ներկայիս տնտեսական իրականության մեջ հիմնախնդիր է ոչ թե դրանց արտադրությունը, այլև մշտական գնորդների գտնելը, որոնք կապահովեն անհրաժեշտ վճարումը:

Անհատ ֆերմերի համար դժվար է վաճառքի համար նախապատրաստել մեծ քանակությամբ միատարր և բարձր որակի մթերք ամենացածր գներով՝ միաժամանակ ապահովելով մատակարարումների անընդհատությունը, արտադրության խթանումը և շահութաբերությունը: Բացի այդ անհատ ֆերմերի թույլ կողմերից է նաև այն, որ նա հնարավորություն չունի բանակցություն վարել արտադրվող մթերքի վաճառքի պայմանների և գնի վերաբերյալ: Այդպիսի արտադրողը վերամշակող գործարանի համար կդառնա անվստահելի և իրենից ոչինչ չներկայացնող հաճախորդ:

Անհատ ֆերմերների դիրքերի ամրացումը կարող է տեղի ունենալ գյուղատնտեսական մթերքներ արտադրողների խմբերի մեջ ներգրավվելու ճանապարհով:

Անդամակցելով տնտեսական գործունեության այս ձևաչափին ֆերմերը ձեռք է բերում ավելի կայուն դիրք իր արտադրանքի պոտենցիալ գնորդի նկատմամբ, ինչպես նաև ամենակարևորը՝ առավել մրցունակություն շուկայում:

## Գործողության նպատակը

Գյուղատնտեսական մթերքներ արտադրողների խմբերի ստեղծման նպատակն է գյուղ մթերքների համապատասխանեցումը շուկայական պայմաններին, խմբի անդամների կողմից մթերքների համատեղ ներդրումը ապրանքաշրջանառության մեջ, այդ թվում՝ վաճառքի համար նախապատրաստումը, տնտեսական արդյունավետության բարելավումը, արտադրանքի պլանավորումը հաշվի առնելով հատկապես դրանց որակն ու քանակը, առաջարկի կենտրոնացումը և գյուղմթերքների վաճառքի կազմակերպումը /վաճառքի կենտրոնացում և մեծածախ գնորդների մատակարարում/, ինչպես նաև շրջակա միջավայրի պահպանություն և արտադրանքի վերաբերյալ տեղեկատվության տրամադրման ընդհանուր սկզբունքների որոշում՝ հաշվի առնելով բերքի քանակն ու արտադրանքի հասանելիությունը:

## Արտադրողների խմբերի առավելությունը անհատ ֆերմերի նկատմամբ

Արտադրողների խումբը ֆերմերների համար ստեղծում է նոր հնարավորություններ և նպաստում է.

- առադրանքի որակի բարձրացմանը՝ արտադրության առաջավոր տեխնոլոգիաների կիրառման ճանապարհով.
- շուկայում ճանաչվող ապրանքանիշի ստեղծմանը.
- արտադրանքի ինքնարժեքի իջեցմանը՝ արտադրության մեջ օգտագործվող միջոցների համատեղ ձեռքբերման ճանապարհով
- հաճախորդների հետ գների վերաբերյալ բանակցությունների վարման, ինչպես նաև նրանց ընտրության հնարավորյանը
- առևտրային միջնորդների վերացմանը
- մեքենա-տրակտորային պարկից համատեղ օգտվելու հնարավորյանը
- բազմացման համար միատարր սերմանյութ ապահովմանը
- ֆերմերների միջև արտադրության և տեխնոլոգիաների ոլորտի նորույթների վերաբերյալ տեղեկատվության փոխանակման հնարավորյան ստեղծմանը
- գյուղական բնակավայրերում աշխատատեղերի ստեղծմանը
- արտադրանքի և, հատկապես, բերքատվության վերաբերյալ տեղեկատվության փոխանակման ընդհանուր սկզբունքների որոշմանը
- արտադրանքի ստանդարտացման ապահովմանը
- պահպանության և մատակարարման համար իրականացվող ծախսերի արդյունավետության բարձրացմանը

## Արտադրողների խումբ – Քայլ 2

### Գործունեության ձևերի ընտրությունը

Գյուղատնտեսական մթերք արտադրողների խումբը հանդիսանում է ֆերմերների կամավոր միավորում, որոնք շուկայում գործում են համատեղ՝ նպատակ ունենալով իրացնել իրենց տնտեսություններում արտադրված մթերքը:

Խմբի կազմավորումը և տեխնիկական միջոցներով նրա համալրումը, որոնք թույլ կտան մթերքի

երկարաժամկետ պահպանություն, որակի չվատթարացում, ինչպես նաև այդ մթերքի վաճառքի համար նախապատրաստումն ու մատակարարման կազմակերպումը մեծ ֆինանսական ծախսեր են պահանջում: Միանշանակ առավել հեշտ է այդ նպատակի համար միջոցներ ներդնել լինելով կազմակերպված ձեռնարկատեր, քան գործել անհատական կերպով: Խմբային որևէ ձևաչափի մեջ ընդգրկվելը, ինչպես ներկայացվեց նախորդ գլխում, այս ոլորտում կրթի հսկայական օգուտներ: Սակայն գլխավոր հարցը կայանում է նրանում, թե ի՞նչ իրավական ձևաչափ է անհրաժեշտ ընտրել: Նման որոշման կայացումը պահանջում է տվյալ երկրի օրենսդրությամբ թույլատրվող հնարավորությունների մանրակրկիտ ուսումնասիրություն և այնպիսի ձևաչափի ընտրություն, որը առավել ամբողջական կերպով կհամապատասխանի արտադրողների խմբերի գործունեության բնույթին:

Լեհաստանի օրենսդրության համաձայն արտադրողների խումբը ազատ է ընտրելու այն իրավական ձևաչափը, որով կշարունակեն իրենց գործունեությունը և, որը առավել օգտավետն է:

Գյուղատնտեսական մթերք արտադրողները կարող են ընտրել համատեղ գործունեության հետևյալ ձևաչափերը.

- Կոոպերատիվներ
- Ընկերություններ
- Միություններ
- Ասոցիացիաներ

## Արտադրող խումբ – Քայլ 3

### Արտադրող խմբի գործունեության օրինականացումը

#### I. Հիմնադիր ժողով

Արտադրողների խումբը իր գործունեությունը վարելու իրավական ձևաչափն ընտրելուց հետո հաջորդ քայլով հրավիրում է հիմնադիր ժողով: Այդ ժողովում գյուղատնտեսական արտադրողները պաշտոնապես հիմնում են խումբը և ընդունում են հիմնադիր ակտը, որը հիմք է հանդիսանում նորաստեղծ կազմակերպության գործունեության համար: Հիմնադիր ժողովի ընթացքում կատարվում է նաև խմբի ղեկավարների ընտրություն: Այդ ղեկավարները, ընտրվելու պահից ներկայացնում են խումբը և կայացնում են որոշումներ ընթացիկ գործունեության վերաբերյալ: Ընդհանուր ժողովի ժամանակ ընդունում են բանաձևեր, որոնք լիազորում են խմբի նորընտիր ղեկավարներին ներկայացնել դիմում՝ ձեռնարկատերերի պետական ռեգիստրում գրանցում կատարելու վերաբերյալ:

#### II. Հիմնադիր ակտ

Արտադրող խումբը որպես ձեռնարկատեր իր գործունեությունը վարում է կանոնադրության կամ նոտարական ակտ-պայմանագրի հիման վրա, որը կոչվում է հիմնադիր ակտ: Այդ փաստաթուղթը մանրամասն կերպով սահմանում է անդամների միջև փոխգործակցության գլխավոր սկզբունքները, ինչպես նաև յուրաքանչյուրի գործունեության ոլորտը: Դրանում ընդգրկված կանոնակարգերը սահմանում են նաև՝

- խմբի կազմում նոր անդամներ ընդգրկվելու և նրա կազմից դուրս գալու հիմնական սկզբունքները,
- բաժնետիրական կամ սահմանափակ պատասխանատվությամբ ընկերություններում ունեցած բաժնետոմսերի կամ բաժնեմասերի վաճառքի սկզբունքները,

- տվյալ մթերքի կամ մթերքների խմբաբանակի ծավալով միայն մեկ խմբին անդամակցելու պահանջը.
- բոլոր մթերքների խմբաբանակի վաճառքը խմբի միջոցով վաճառելու, ինչպես նաև այդ սկզբունքից չշեղվելու պահանջը.
- խմբի անդամների կողմից այն տեղեկատվության տրամադրման սկզբունքները, որոնք վերաբերվում են տվյալ մթերքի, որի արտադրության համար ստեղծվել է խումբը, վաճառքի ծավալներին և գներին, ինչպես նաև այն մթերքների վերաբերյալ, որոնք վաճառվել են խմբից դուրս .
- հատուկ հիմնադրամի ստեղծման և օգտագործման սկզբունքները, եթե այդպիսիք կկազմակերպվեն,
- խմբի անդամի հանդեպ կիրառվող պատժամիջոցները, որը չի կատարում իր պարտականությունները:

Հիմնադիր ակտը կարող է պարունակել նաև դրույթներ, որոնք վերաբերվում են խմբի անդամների արտադրության միջոցներով մատակարարելուն, գյուղտնտեսական սարքավորումների համատեղ օգտագործման սկզբունքներին, արտադրանքի խթանմանը, արտադրված մթերքների պահեստավորմանը, փաթեթավորմանը և ստանդարտացմանը:

## Արտադրող խումբ – Քայլ 4

### Խմբի գրանցումը համապատասխան ռեգիստրում

Որպես արտադրողների խումբ գործունեություն ծավալելուց առաջ անհրաժեշտ է իրականացնել ձեռնարկության գրանցումը համապատասխան պետական ռեգիստրում: Լեհաստանի օրենսդրությունը պարտադրում է արտադրողների խմբերի տնտեսական գործունեությունը գրանցել կենտրոնական պետական ռեգիստրում:

Բացի այդ գործողություններից արտադրողների խմբերը, գործելով որպես ձեռնարկատերեր, պարտավորված են գրանցել իրենց գործունեությունը ֆինասահարկային տեսչությունում, վիճակագրական, ինչպես նաև սոցիալական ապահովագրական վարչություններում: Արտադրող խմբերը, որպես ձեռնարկատերեր ունեն նաև այլ պարտականություններ, որոնք բխում են նման տեսակի տնտեսական գործունեություն ծավալելու պահանջներից (ունենալ բանկային հաշիվ, ստեղծել ընկերության կնիք, կատարել սանիտարական, հակահրդեհային և բնապահպանական կանոններին համապատասխան պարտավորությունները և այլն):

## Արտադրող խումբ – Քայլ 5

### Խմբի գործունեության պլանի մշակում

Համալեռնական դատական ռեգիստրում գրանցվելուց հետո խումբը դառնում է տնտեսական գործունեություն իրականացնող սուբյեկտ: Սակայն դա դեռ չի նշանակում, որ այն հանդիսանում է արտադրող խումբ: Որպեսզի ստանա այդպիսի կարգավիճակ անհրաժեշտ է խումբը հաշվառել նաև այն ռեգիստրում, որը վարվում է Մարշալային կառավարման մարմնի կողմից խմբի գտնվելու վայրին համապատասխան: Սակայն մինչ խումբը կարող է դիմում ներկայացնել այդ ռեգիստրում գրանցվելու համար, անհրաժեշտ է նախապատրաստել խմբի գործունեության պլանը:

Խմբի գործունեության պլանը հանդիսանում է բավականին կարևոր փաստաթուղթ է, որն ընդգրկում է խմբի առնվազն 5 տարվա գործունեության ուղղությունները: Նրա ճիշտ կառուցվածքը թույլ է տալիս հարթ և

արդյունավետ հասնել խմբի ենթադրվող նպատակների նվաճմանը և ի վերջո նպաստում է դրա տնտեսական հաջողություններին:

Գործունեության պլանը՝ դափաստաթուղթ է, որը բաղկացած է երկու մասերից՝ նկարագրական և ֆինանսական: Նկարագրական մասը պետք է պարունակի ձեռնարկատիրոջ վերաբերյալ հիմնական տեղեկությունները, ինչպիսիք են օրինակ՝ անվանումը և հասցեն, ինչպես նաև նրա գործունեության բնութագիրը (ընկերության գործունեության նպատակը, ընկերության և անդամների տնտեսությունների զարգացման ուղղությունները, ընկերությունը կառավարող անձանց բնութագրերը, անդամների տնտեսությունների արտադրանքների նախատեսված քանակը և նրանց վաճառքի ծավալը, ներդրումային ծրագրերը, ներդրումային գործունեության գրաֆիկը, ֆինանսական ներդրումների կառուցվածքը) և մարկեթինգային ծրագիրը (ենթադրություններ, շուկայի վերլուծություն, արտադրանքի, մատակարարման, խթանման և գովազդի գնային ռազմավարություն): Գործունեության պլանի երկրորդ մասը դա ֆինանսական մասն է, որը ցույց է տալիս խմբի գործունեության համար անհրաժեշտ կապիտալի չափը և ֆինանսավորման աղբյուրները:

Պլանը պետք է լինի խմբի գործունեության ուղեցույցը, նրա վերջնական բովանդակությունը կախված է այն պահանջներից, որոնք բխում են խմբի անդամների առջև դրված նորմատիվային ակտերի դրույթներից: Դրանում պարունակվող տեղեկությունները ինչքան ավելի ստույգ և մանրամասն լինեն, ապա այդքան ավելի մեծ կլինի խմբի անդամների միջև արդյունավետ փոխգործակցության հնարավորությունը, որոնք ի վերջո կնպաստեն ձեռնարկության հաջողությանը:

## Արտադրող խումբ – Քայլ 6

### Դիմում Մարշալային կառավարման մարմնին ռեգիստրում ընդգրկվելու համար

Արտադրող խմբի հաջորդ կարևոր պարտականությունն է ստանալ վարչական թույլտվություն, որը տրվում է խմբի նստավայրին համապատասխան վոնդոլոթյան Մարշալի կողմից: Այդ թույլտվությունը, հաստատում է արտադրող խմբի կողմից իրականացվող պայմանները, որոնք բխում են օրենսդրության համապատասխան դրույթներից: Այդ դրույթների համաձայն, արտադրող խումբը գրանցվում է գյուղատնտեսական արտադրողական խմբերի ռեգիստրում:

Խումբը, ռեգիստրում գրանցման պահից համարվում է արտադրող խումբ և կարող է սկսել իր գործունեությունը մթերքների վաճառքի ոլորտում, ինչի համար որ այն հիմնվել է:

Վոնդոլոթյան Մարշալը արտադրող խմբերին բացի ռեգիստրում գրանցելուց ունի նաև վերահսկման իրավասություն: Վոնդոլոթյան Մարշալը՝ իրականացնելով վերահսկողություն արտադրող խմբերի նկատմամբ, ստուգում է, թե արդյոք խումբը գործում է ըստ այն սկզբունքների, որոնք նա ներկայացրել է ռեգիստրում գրանցման դիմումի հետ միասին: Խումբը պարտավոր է վոնդոլոթյան Մարշալին տեղեկացնի յուրաքանչյուր փոփոխության մասին, այնպես, որ ռեգիստրում պարունակող տվյալները համապատասխանեն իրական փաստերին:

\*Մարշալային կառավարման մարմինը հանդիսանում է Լեհաստանում տարածաշրջանային կառավարչական հիմնարկ: Մարշալային կառավարման մարմինը Նեկավարությանը օժանդակող մարմին է, և ենթակա է վոնդոլոթյան Մարշալին: